



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

L<sup>4</sup>n  
839-840

ГИРБГИА 7.

1999 ,



# ՀԱՅԳՈՅԺ

89.99-1

Ա.ՇԽԱՐԱՆՔ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԵԿԻՆ

ԴՐԵՑ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՈՒԺԵՑ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՏՈՒԱՐ Ի ՄԱՄՈՒԼ


ՄՏԵՐԻՄ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆ ՄԵՐ

ՊԱՐՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱԶԵՄԵԱՆ

Կ. ՊՈԼԻՄ

ՏԵՂԴՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏԵՏԵՍԵԼՆ

1877



Ա. Ո. ՈՂԲԱԿԻՑ ԴՄ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԵԱՅ

Դու մինչ կայտառ ու ծաղկահասակ երիտասարդ ես՝ հրճուանք և ուրախութիւն կը սիրես, երդ և հարսանեաց պար կը սիրես, ո՞հ, ես զքեզյողը և 'ի լաց կը հրաւիրեմ Հայոց աշխարհին վերայ: կը ճանաշեմ ազնիւ ոգիդ, որ թէ՛ 'ի խինդ և թէ՛ 'ի լաց միապէս զգայուն ես. այդ եւս մի նշանակ կը համարիմ ես՝ թէ ոգիդ կենդանի է, և դու Հայուն անդրայ զաւակ չես: Հայոց աշխարհ կուլոյ, ես և դու Բիւզանդիոնէն ինչպէս 'ի մօտոյ կը լսենք նոցա կոծն ու կական, պէտք է լալակից ու վշտակեց լինինք, զի նոյն հայրենեաց պանդուխա որդիքներն եմք:

Գիտես դու և կը յիշես թէ անցեալ տարւոյն 'ի վերջ՝ ես զվան ՎԱՆԳՈՅՁՈՎ ողբացի, մինչ թագուցեալ կրակն միայն զվան վառեց. այդ կրակին հետ արիւն և այլ սոսկալի աղէտներ չկային, այլ միայն վանեցւոց կեանք և ստացուածք հուրմարակելով մոխիր դարձուց: Եւ ի՞նչ պէտք էր սուր և արիւն. միթէ ժողովուրդն իւր չքաւորութենէն ինքնին անարիւն և անսուր չի չքանար:

Յուշ բեր, վասպուրական դաւառի շինական ժողովրդոց յորդոր կը կարդայի, որ Վանայ կրա-

4840-60

28 843

առ Ամիրապետն . « ԱՐՁԱԿԵՑԻՔ ՈՐ ՏԵՍԱՆԵՄ ԶՈՒԱԱՓՈՒԹԻՒՆ ԱԽԵՐԱԾՈՅՆ ԵՐԿՐՈՒՆ ԽՄՈՅ ՀԱՅՐԵՆԵԱՅ » : Ո՛հ , ես էլ նոյն ըղձով կը փափագիմ , որ միանդամ արձակիմ այս պանդխտութեան շղթայէն , երթամ ոտքով շրջիմ և աչքով տեսնեմ մեր աւերած աշխարհ , և թէ լամ՝ թող արտասուքս այն կարմիր հողոյն վերայ կաթի , ուր կոտորուեցան Հայեր և ուր թափեցաւ անմեղ մանուկներուն և անբիծ կոյսերուն արիւնք : Ես դու ինձ հետ դոչէ , որ սիրահար ես հայրենի աղատութեան . Ով անպարտ զոհերու հրաշագործ արիւն , արդեօք Հայոց մեռեալ ու մոխրացեալ հողերուն նոր կենդանութիւն պիտի տա՞ս :

Զվարանինք սակայն և ողբերով չյուսահատինք . Երկնից դթութեան և ողորմութեան հոսանքներ անսպառ են . այն որ երբեմն Բարիլօնի դաշտին մէջ ցրուած անյօս ժողովուրդին ցամքած ոսկորներուն վերայ ցողեց և խոկցն գերեզմանի դաշտավայրը կենդանութեամբ կանաչացաւ , օր մէ եւս երկինք այդ կենդանարար ցող Հայոց դաշտերուն վերայ կը ցողէ . դու կը տեսնես թէ ի՞նչպէս Հայոց աշխարհին եւս կը վերածնի հրաշիւք : Միայն թէ մեք աննկուն արիութեամբ գործենք և Աստուած մեր օգնականն է :

Իսկ դու , աղնի՛ բարեկամ , իմ փոքրիկ երկոյս փոքրիկ Մեկենաս , դարձեալ ձեր անուան կը նուիրեմ ՀԱՅԳՈՅԺ որ Հայոց աշխարհի աշխարհն է , ինչպէս արդէն նուիրեցի մի դուզնաքեայ երկս , որոյ վերտառութիւնն էր ԺԱՄԱՆԱԿ եւ ԽՈՐՀՈՒՐԴ իիմ :

Կին վերայ ջուր լեցնեն , և օգնեն դժբաղդ վանեցւոց . ես չէի գիտեր և չէի գուշակեր , որ վանայ կրակէն յետոյ պիտի ելնէր ուրիշ պատուհասիչ Մարական կրակ մը , որ քան զբարելոնի բոցն ծաւալելով՝ բոլոր վասպուրական աշխարհն դժոխային հրով ծախէր , Հայոց գեղերն ու աւաններ քանդէր և աւերէր , Բագրեւանդայ գաւառի ժողովուրդ իսպառ կոտորէր , Հայոց աշխարհի վայրեցին հրով ապականէր , Հայոց տնասէր կիններ , գեղադէմ հարսներ և կոյսներ գաղանային վայրագութեամբ լլիէր , և շատն եւս յափտակելով գերեվարէր , և այլ անլուր անօրինակ ոճիրներ գործէր և ահոելի աղէտներ բերէր Հայոց աշխարհին վերայ :

Վասն այդորիկ ես արդ մոռցայ զվան և ըզ-վԱՆԳՈՅԺՆ . արդ կ'սկսիմ ՀԱՅԳՈՅԺՈՎ ողբալ մեր հայրենեաց համատարած աղէտներ , զորս վայրագ խուժերուն ձեռքէն կրեց Հայոց անտէր ժողովուրդ : Ճաւ է ինձ որ բաւական չեղայ վասպուրական աշխարհին , բարձր Հայոց , Բասենոյ , Բագրեւանդայ գաւառին և Մշոյ աշխարհին արդի վերահաս չարեաց հազար բիւր աղէտներուն նկարագիրը բովանդակ հանել : Միթէ հնա՞ր է , որ միայն հոգւով տեսնեմ կամ գուժատու լրերով չափեմ մեր հայրենեաց նորաքանդ աւերակներ :

Այլ ինչպէս ըղձակաթ կը լինէր վահան դողմացին մինչ Բարիլօնի գերութեան շղթայն կաշկանդէլ էր զինքն , նա կը գոչէր և կը պաղատէր

Չու այժմիկ փութա՛ և տա՛ր ՀԱՅԳՈՅԺՄ ոռ՛ւր  
մասուլին . թող մամուլն եւս իւր աղատ թեւե-  
րով տանի տայ աշխարհին :

Ես գիտեմ, այն ազգ և աշխարհ որ չայ չէ  
մեղ հետ չի լար . այլ մեղ չէ պէտք օտարին լաց .  
բաւական է որ թէ՛ տարաշխարհիկ գաղթական  
Հայեր , և թէ՛ Բիւզանդիոնի պանդուխտ Հայեր  
յիշեն մեր հայրենեաց շարչարեալ որդիքներ և  
լան :

Ես գիտեմ և դու գիտես թէ սոսկ լալով ու  
ողբերով եթէ շաղախենք մեր հայրենեաց հող՝  
հայրենիք շինուիր : Սորա համար թերեւս ոմանք  
որ չոր ու անզգոյ սիրտ ունին , զիս մեղադրելով  
բամբասեն թէ Խրիմեանը մի լալկան մանուկ է  
դարձեր կամ թէ միշտ աւերակասէր բու :

Սակայն ես կը պատասխանեմ նոցա՝ որ այդ-  
պէս կը կարծեն . թող այդ ծեր իմաստուն և  
համարեղ շինողներ անլաց և անկոծ շինեն մեր  
հայրենիք , և կամ նորա լացող որդիքներուն  
արտասուքը ծիծ աղով սրբեն : Ես յայնտամ կը  
թողում գուժերս և ողբերս , կ'սկսիմ միայն ու-  
րախութեան երդ նուագել :

Ամեն աշխարհ և ժամանակ իւր ծիծաղ և  
լացն ունի . ո՞վ է այն՝ որ իւր հարսանիք խըն-  
դումով և պարերգութեամբ չկատարեր . ո՞վ է  
այն՝ որ իւր մեռեալը առանց կոծոյ և լալց կը  
թաղէ :

Այժմիկ Հայոց աշխարհի կեանք և ժամանակ  
լաց է . Հայոց տունը՝ սգոյ տուն է և իւր հան-  
դէսը մեռելոց հանդէս է : Պէտք է ուրեմն լանք

վշտակցինք քանի որ մեր հայրենեաց որդիքներ  
կու լան . և նոքա որ կու լան՝ մեր հայրեր , մեր  
մայրեր , մեր եղբայրներ , մեր քոյրեր , մեր սի-  
րելիներ և մեր բարեկամներն են :

Երանի՛ թէ աղատ շնչով , աղատ ձայնով և  
աղատ գըչով լայինք . ո՞հ , մանուկ քան զմեզ  
աղատ է և աղատաբար կու լայ . մեք հեղձամբո-  
ձուկ լինելով կու լանք . և դու գիտես որ մեր  
աշխարհին մէջ լացն եւս աղատութիւն չունի :

Լանք ապա և բարձրաձայն աղաղակենք . թէ  
մեր լալոյ ձայնին աշխարհ խուլ լինի ու չլսէ ,  
հաւատանք թէ երկինք անշուշտ կը լսէ . և Աստ-  
ուած իւր բարերար ձեռքով կը սրբէ Հայոց աշ-  
խարհի լայն . արագ կը բերէ մեր փրկութեան  
և աղատութեան օր . և այն օրն է ահա , որ կը  
խայտան և կը ցնծան մեր հայրենեաց որդիքներ .  
յայնժամ մեք եւս Մովսիսի քրոջ Մարիամու-  
թմբուկն մեր ձեռքն առնելով՝ հետ նոցա կ'եր-  
դեմք և կը պարեմք . « Օրհնեսցուք զՃէր , զի  
փառօք է փառաւորեալ : »

ԽԹԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

# ՀԱՅԳՈՅԺ

Տէ՛ս, Տէր, զի նեղեալ եմ. ոսկերք իմ խռովնցան,  
սիրտ իմ գելաւ յիս և ես դտայ դառնացեալ արտա-  
քուստ անժառանդ եաց զիս սուր, որպէս և մահ ՚ի ներ-  
քուստ :

Լուարո՛ւք, լուարո՛ւք զայս՝ զի եմ հեծեմ, հառա-  
շեմ և ոչ ոք է որ միսիթարէ զիս, . . . ո՛վ Տէր, դու  
արարեր զօրն զայն և դու կոչեցեր զժամանակն զայն,  
և եղեւ ինձ վայ վայ :

Չե՛զ ասեմ, ճե՛զ ասեմ, ո՛վ անցաւորք ճանապար-  
հաց . դարձայք՝ հայեցարուք և տեսէք թէ իցե՞ն երբէք  
ցաւք ըստցաւոց լեալ՝ որք ՚ի վերայ իմ հասին . . .

Ու՞ Երեմայէ Ա. Գլ.

## ԱՇԽԱՐԱՆՔ

### ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐԱՆՔԻՆ

ՈՂԲԱՌ զքեզ, Հայոց աշխարհ, զի քո կեանք ող-  
բերգութիւն է . ամեն դար և ժամանակ երբ աղէտ-  
ներ զքեզ պատեցին, դու միշտ աղէտներուդ հետ մի  
ողբերգու ծնար . քո առաջին ողբերգուն Մովսէս Խո-  
րենացին է, որ հազար երկերիւր ամ յառաջ ուժ-  
գին ողբաց զքեզ, մինչ վերացաւ գլուհդ Արշակունի  
թագ, մինչ ջախջախնեցաւ իշխանութեանդ գաւազան,  
նսեմացաւ քո փառք, կորեաւ ազատութիւնդ, և դու  
տիրական բարձրութենէդ խոնարհելով իշեր ծառայա-  
կան ՚ի ստրկութիւն . դու որ քան զնիւսիսականս վե-  
հագոյն կը դնէիր քո գահը :

Յայն օրէն անկար դու ուժգնապէս երբ խօլամիտ  
նախարարք զԱրշակունի թագն դաւեցին, երբ Վեստ  
Սարգիս և մատնիչ Կիրակոս Անուոյ ազատ բանալին  
նենդութեամբ Յունական կայսրութեան յանձնեցին.  
այնուհետեւ թէեւ պահ մի գիշերալյս աստղի նման .

կին թագդ Հայկազանց գերեզմանէն ծագեցաւ, յանհարծ աղօտապէս փայլեցաւ Տաւրոսեան լերանց գըլուխ, ո՛հ, այդ քո իրիկուան վերջալըսն էր, որ Լուսինեան լեռոնին հետ արեւուն պէս 'ի մայր մոռաւ. յայն օրէն Հայոց աստղ ծածկեցաւ օտար գերեզմանին մէջ և այլ եւս չծագեցաւ:

Յայն օրէն վերջի թագին հետ մեռաւ քո ամեն յոյս և հայրենի ազատութիւն. յայն օրէն մինչեւ ցայսօր վեց դարեր անցան, դեռ ո՛չ լրացաւ քո ստրկութեան և տառապանաց ժամանակ, այլ տառապանք 'ի վերայ տառապանաց միշտ հասրին 'ի վերայ քո. չտուին քեզ մի հանգիստ ժամանակ, որ պահ մի շունչ առնէիր և հանգչէիր մաշած ու թալկացած կեանքիդ մէջ:

Թողումք Յոյն, Պարսիկ և Արարացին. Լէնկթիմուր, Շահապան և այլ հիւսիսային բարբարոս ազգեր քանիցս անգամ արշաւեցին, քանդեցին, հողարծուր դարձուցին ամուր ամուր քաղաքներդ, խրամատեցին բոլոր այդեցանկերդ, զքեզ ճռաքաղ արարին, կայտառ որդիքներդ մինչեւ 'ի խուժաստան և Շահաստան գերի վարեցին:

Օրհնեալ ես դու, Հայոց աշխարհ. որչափ քանդող թշնամոյն ձեռք կը ջանար զքեզ իսպառ ճռաքաղ առ նել և որթերդ յարմատէն յօտել, դու անդրէն նոր նոր ուռեր տալով կը բողոքէիր: Հաւատա՛ դու, Հայոց աշխարհ, թէ Աստուծոյ օրհնութիւնն էր որ միշտ անապական պահեց քո ճիռերդ. զի դու Քրիստոսի ճշմարիտ որթին վերայ հաստատուած ես:

Բայց դարձեալ ողբամ զքեզ, անտերունջ ժողովուրդ Հայոց. զի քո մնացորդ ճիռեր անխնայ ճմիւց ժանան ժայիրհ Քիւրտ. սորա համար քո կեանք՝ թէ՛ առաջին և թէ՛ վերջին, միշտ ողբերգութեամբ լի է. Մովսէս չէ միայն որ զքեզ կ'ողբայ. Եղվէն, Ղազարիկ, Լաստիվերտցին, Մեծոփեցին, Առաքել պատմագիր, այս ամեն

իրենց ժամանակին մէջ զքեզ ողբացին: Ո՛հ, ես էլ քո ողբերգուն եմ. երանի՛ թէ յետինն լինէի, և այլ եւս չնէր քեզ ողբերգու. այլ եւս անպահապան այգիդ ճռաքաղ չլինէր. երթայր և այլ եւս չդառնայր անդրէն քո տառապանաց տարին և ժամանակ:

Բայց դարձաւ և բարկութեամբ դարձաւ, երբ Արեւամտեան քաղաքակրթութիւն Արեւելքը կ'ողջունէր, երբ Թուրքաստան Սահմանադրութիւն կը հրատարակէր, երբ պանծացող տասնեւիններորդ դարը՝ դիտութիւնն լրս, ազատութիւն և ազգաց իրաւունքներ կը քարոզէր, և երբ դու ինքնավար Սահմանադրութիւն ունէիր, կը հրճուէիր յուսով նորաքայլ յաւածղիմութեանդ մէջ:

Իրբեւ սրաթեւ արծուի, իրբեւ ճախրաթեւ բազէ յանկարծ հասաւ ու դարձաւ քո վերայ տառապանացդ օր. սեւ օր, սեւ զիւեր էր այն. և իրբեւ ծննդական մօր՝ ցաւոց երկունք զքեզ ըմբռնեց. դու արդ կը հեծես և ճիչ կը բառնաս. յոյսդ՝ երկուանաց մէջ է. կամ կը ծնիս ողջամբ 'ի նոր յազատութիւն, և կամ կը մեռնիս այդ մահացու վերերովդ. անէ՛ծք այն ձեռաց, որ քո հանգ ստորանի գերեզման կը կնքէ թէ այլ եւս ո՛չ զոյ Հայն ու Հայաստան:

Ի՞նչ՝ անթախտ և թշուառ ես դու, մայր, թէ մեռնիս այժմիկ. երբ ուրիշ մայրեր և ազդեր 'ի նոր կեանս կը վերածնին. քո կեանք՝ քառասուն դար է. Յունական կրակէն, Պարսկական կրակէն, Արարացւոց կրակէն, Թաթարներու կրակէն ողջ անցար, անհուն անհամար զոհեր տուիր, որպէս զի մնացորդ որդիքներովդ ապրիս. և արդ ապիկար կը վաստազդի Քիւրտին կրակով սիստի այրիս և սպառի՞ս:

Մինչ՝ հիւսիս հարաւին դէմ 'ի մարտ կ'որոտար, Հայոց լեռներու հին աւազակներն 'ի զէն կը կոչուէին. այդ բանը՝ նոցա համար մի բախտ և պատեհ ժամ էր:

Նոքա որ սովորած էին առանց քրտանց վաստակի՝ գիւղական ժողովուրդին ճակատի քրտանց հացն ուտել, միշտ աւարով ու յափշտակութեամբ ապրիլ, իրաւունք համարեցին իրեննց համար ամեն բռնութիւն, ամեն եւզեռն և ոճիր 'ի գործ դնել քրիստոնեայ ժողովուրդին վերայ. և այնչափ անվախ ու անկասկած կը գործէին շարիքներ, որպէս թէ երկիրն անիշխան էր, ոչ իրաւունք կար, ոչ դատաւոր, ոչ դատաստան :

Մարախի ու թրթուրի նման թալիեցան, Հայոց գիւղեր և դաշտեր ծածկեցին, մի խուն ժամանակի մէջ ամեն կանանչութիւն կերան ու չորցուցին, այն չէն չէն դեղեր և աւաններ անապատ դարձուցին : Միթէ չգիւտե՞նիք 'ի սկզբանէ անտի որ այդ ազգին ձեռք միշտ քանդող է, երբէք չինել չդիտէ . ես էլ չդիտեմ թէ ինչո՞ւ համար է որ երկրին իշխանութիւն այդ աշխարհաքանդ ձեռք կարձել չուզեր :

Եւ ոյք էին Քիւրտերու անկարդ հրոսակներուն վարիչ և առաջնորդ . — նոցա մոլեկրօն դենապետներն էին, որոց ոգիներ 'ի բնէ անտի ոլութեամբ լցուած կը զայրանային Հայոց ժողովուրդին դէմ. մանաւանդ երբ կը լսէին և կը հաւատային իսկ թէ այս պատերազմ՝ յանուն Քրիստոնէից աղատութեան կը մղէ հիւսիսային Պետութիւն :

Ես գիտեմ ու կը ճանաչեմ զՔիւրտն . գիտեմ թէ նա ինքնին ոչինչ գործ և զօրութիւն չունի . այդ անդէպ պատճառանքներ 'ի բաց թողունք : Այս', դենապետներու կրօնամոլութեան հուրը կը վառէր զիրենք . այլ ի՞նչ հուր էր այն, որ 'ի ներքուստ զդենապետներ կը վառէր :

Ո՞հ, մի' կրկտեր այդ հուրը, գրիչ իմ, գրիչ իմ, կը բորբոքի և զքեզ կ'այրէ, թող այրէ, թող այրէ, և ամիւնս երթայ խառնուի Հայոց այրած ժողովուրդի ամիւնին հետ :

Տէրութիւն գԲիւրտն 'ի զէն կը կրչ . և ո՞վ իրաւունք ունի մեղաղրել զինքն . զի Քիւրտն իւր դաւանակից ժողովուրդն է՝ առանց գրի և Գուրանի, և քան զՀայն բիւր անդամ յարգի :

Այլ միթէ զինուոր անթոշակ կը զինուորի . Քիւրտին հացն ու թոշակ ի՞նչ էր զինուորող ձեռքէն . — ոչինչ . այլ միայն այս բան « Գնացէք և ձեր թոշակն ու հաց ձեր ձեռքով հոգացէք » : Եւ ուստի . — Հայոց գեղերէն ու ժողովուրդէն :

Այս անարդար դատաստանին մէջ Քիւրտ կ'արդարնայ Աւետարանին և Գուրանին առաջ . և ես նմա իրաւունք կու տայի, եթէ Քիւրտն միայն իւր պէտքեր հոգար, հիւրաբար վարուէր, գիւղացւոց հացն ուտէր . թէ հեծեալ էր, ծիոյ գարման խնդրէր, ելնէր և ուղղակի 'ի բանակ երթար :

Քիւրտն այսպէս չվարուեցաւ . և այնպիսի սոսկալի խժդժութիւններ գործեց նա, որ աշխարհի պատմութեան մէջ ոչ գրիչ գրեց, ոչ բերան խօսեց և ոչ մարդոյ ականջ լսեց :

Կ'ասեն թէ Աէնկթիմուր Հայոց աշխարհ՝ արիւնով լուաց . լաւագոյն էր թէ Քիւրտն եւս արիւնով լուանայր : Կ'ասեն թէ բռնաւոր Ալիմալան մի անօրինակ վրէժինդրութիւն մտարեկելով՝ Անւոյ մէջ արեան աւազան մի կազմեց, Հայոց ջերմարիւն երիտասարդներ ոչխարի նման մորթելով լցոյց զայն, ու մուան նորա մէջ ինչպէս 'ի լոգարան, և այսպէս չիջոյց իւր սրախն զայրոյթը : Երանի՛ թէ Քիւրտն եւս իբրեւ արիւնախանձ ինձ՝ արիւնով միայն շատանայր : Կ'ասեն թէ խորամանկ Շահապասն մինչ 'ի գերութիւն կը վարէր Այրարատայ աշխարհի որդիքներ, տասներկու հազար հոգի Երասխին մէջ թափեց : Հազար անդամ երանի թէ Քիւրտն եւս այդպէս գործէր . Հայոց կիներ և կոյսեր նոյն Երասխայ

ծոցին մէջ թափուէին , ալիքներ տանէր տանէր ու  
ծածկէր նոցա առականքը :

Դուտե՛րք Հայոց , բիւր երանի' կու տայի ձեզ թէ նոր  
շահապաս մի գար զձեզ 'ի գերութիւն վարէր , և դուք  
երթայիք միահարուռ և կամակար թափուէիք Երասխայ  
գետին մէջ , գետն զձեզ գլորէր տանէր 'ի կասպիա-  
կան ծով , ծովն ձեղ գերեզման լինէր , իւր խոր ան-  
դունդին մէջ ծածկէր ձեր մերկութիւն , քան թէ կու-  
սական արեան մէջ թաթախելով նշաւակէր զձեզ վատ-  
շուէր Քիւրախն վայրագութիւն :

Հայոց լերանց մտերի'մ էրէվայրիք , և դուք իսկ վայ-  
րենի' գաղաններ , բացէ՛ք ձեր որջեր , ցոյց տուէք ձեր  
մութ խորչեր , հիւրասիրեցէ՛ք Հայոց փախուցեալ կիներ  
և կոյսեր , որ մարդակերպ գաղաններէն փախչելով  
ձեր գթութեան կապաստանին :

Ո՞վ հալածեալ գայլեր , դուք արդար էք , դուք ի-  
րաւունք ունիք , երբ սովլալլուկ քայցէն ստիպեալ հա-  
զիւ ահ ու դողով կը համարձակիք հօտուի հօտէն գաղ-  
տագողի մի ոչխար յափշտակել . ելէ՛ք այժմիկ և լեռ-  
ներէն դիտեցէ՛ք 'թէ ի՞նչ կը գործեն ձեր դրացի մար-  
դագէներ . թո՞ղ գեղացւոց ոչխարներ՝ նոցա սիրելի  
ընտանիք և զաւակներն եւս յափշտակեցին , և սրաժա-  
նիքներով սլատառեցին ու կերան Հայոց գեղանի  
կոյսեր :

Ո՞վ ես դու , ողորմելի' կին , որ մերթ խուճապելով  
կը փախչիս և մերթ ծունկերդ կթոտելով կը տապալիս  
'ի գետին . Հէրովդէսի գահիճներ զքեզ կը վարեն .  
ո՞հ , երկունքդ առ երկիւղի հասեր զքեզ ըմբռներ է .  
սորս համար անցար մտար մեկուսի ցորենարոյս արտին  
մէջ , դու ինքնին անդ այեակ ծնար , դաշտի կակուղ խո-  
տերէն խանձարուր շինեցիր , փաթութեցիր մանկիկդ :

Հպիտեմ թէ բերկրեցա՞ր , երբ անցաւ երկունքդ և ող-  
ջամբ ծնար :

Խրիկուն էր , քո տխուր ու սեւ սրտին հետ մութ գի-  
շերն եւս եկաւ զքեզ պատեց . այլ եւս ապահով ե-  
ղար թէ քո վարիչ որսորդներ անցան . առիր նորածին  
մանուկդ՝ գնացիր մօտակայ գիւղ . մանկիկդ կուլար կաթ-  
կ'ուզէր , և դու՝ հաց հաց կը խնդրէիր . զի քաղցէն  
նուազելով կաթդ ցամքեր էր : Զգիտեմ , դժբա՛ղդ կին ,  
թէ այնուհետեւ ազատեցա՞ր բազէներուն մանկերէն :

Անշուշտ կ'ողբաս , կի՞ն դու , թէ թշուառ եմ . որդի  
ծնայ , այլ ամուսինս կորուսի . բայց դու զքեզ բախ-  
տաւոր համարէ , կի՞ն , որ վերահաս անձկութեանդ մէջ  
կարացիր ողջամբ ծնել և մանուկդ ազատել : Փան զքեզ  
անբախտ եղան այն մայրեր , որ մայրենի գրկերէն մա-  
նուկներ ձգեցին ու փախան . որպէս զի գէթ ազատեն  
իրենց անձն չարաշուք Քրդաց լկանքէն :

Ողբա՛մ զքեզ , մանուկ մայրակորոյս . կ'ասեն թէ քո  
մայր մինչ 'ի փախուստ կը խուճապէր , մուցաւ մայրական  
սրտի գորով , ձգեց թողուց զքեզ մի վարած արտի  
ակօսին մէջ . թերեւս հաւատաց Քրիստոսի խօսքին և  
ասաց թէ մանկիկս իբրեւ ցորենահատիկ մի ցանեմ  
հայրենի հողին մէջ , թող մեռնի , որ բեղմնաւորի  
հատիկս բազմապատիկ ատոք ցորենով : Եւ ի՞նչ է այդ .  
— Հայոց աշխարհի ազատութիւն :

Զո՞րն ես պատմեմ մայրերէն ձգուած դիեցիկ մա-  
նուկներ . տեսող գտաւ ու պատմեց թէ մի մանկիկ եւս  
Եփրատայ ափանց եղէզներու մէջ ձգուած էր , ինչակս  
Մովսէս՝ Նեղոս գետին խաղեր : Մեր խեղճ մանուկ  
պրտուեայ սնտուկին մէջ չէր կարածիւթով պատած ,  
այլ այնպէս բացօթեայ ձգուած . խեղճ անմայր տղեկ  
կական բառնալով կուլար : Լսեց մի գիւղական աղջիկ ,  
որ նա եւս կը թագուցանէր զինքն գետեզրի մացառ-

ներու մէջ սիրտ արաց, ձայնի հետ գնաց դտաւ ընկեցիկ մանուկն. դիւղացի քաջ աղջիկ, որ դեռ մայր չչը եղեր, մայրենի գորովով խաղապատեցաւ տղեկին վերայ. ինչպէս ֆարաւոնի դուստր՝ առաւ տարաւ մերձակայ դիւղի, ասաց թէ Եփրատին եզերք շամբերուն մէջ դտայ:

Ջդիտեմ թէ ողջ մնացի՞ր դու, անհայր անմայր որբացեալ մանուկ. ո՞ր օտար մայր քեզ կաթ պիտի տայ ու սնուցանէ, մինչ քո բուն ծնող մայրդ՝ առ նեղութեան ու վշտին, զքեզ անմայր թողուց : Ո՞ւ տառապանաց և դառնութեան օր, որ կաթոդին մայրերուն բընական գորովն ու գութ մոռնալ կու տաս և սրտէն ՚ի բաց կը հանես որդեկին սէր, որ մօր ալլքն և սրտին հատորիկն է :

Ողբա՛մ զձեզ, Հայո՛ց մայրեր, որ կորուսիք ձեր Ծակից ամուսիններ և սիրական զաւակներ. թէ մեռաք՝ երանի՛ ձեզ. թէ ողջ մնացեր էք՝ եղուկ ձեզ: Ա՛հ, ի՞նչ կը լինէր, որ դուք եւս այն Մշեցի դիւցազն կնոջ պէս զօրանայիք, ձեր վշտակրութեան և հալած անաց մէջ կամակար մեռնէիք կրօնի սրբութեան համար, ձեր զաւակաց սիրոյն համար, ձեր համեստ պատկառանաց համար. միթէ այժմ կապրի՞ք դուք, և լաւագոյն չէ՞ր ձեզ մեռնիլ քան այդ չարավիշտ կեանք :

Ի՞նչ անդատաստան կը խօսիս դու, հէք ողբերգու. իրրեւ զառանցող բանդագուշ կը լինիս, կարծելով թէ աշխարհիս վերայ կիներ սուր և բազուկ ունին. մինչ քաջարազուկ կուժիու այրեր կը վատանան իրենց ընտանեկան պատիւ մահու չափ պաշտպանելու, դու գիտես թէ քանի՞ դժուարին է որ տկար ու տանտիկին կիներ դիւցազնանան :

Այո՛, այդ գիտեմ. բայց միթէ չառաքինացա՞ն Հայոց աշխարհի կանայք ու տիկնայք. մինչ նոցա այրերը չը

թայտկապ վարեցին ՚ի խուժաստան . նոքա անալոյ և անու տերունջ մնացին, կանացի տկարութեան անտար վիշտ տերուն զէմ մրցեցին, Պարսկական կրակին դէմ անշառ մնացին, կրօն, հաւատ և սուրբ կեանք անարատ պահեցին . որոց չնաշխարհիկ առաքինութեան հանդէսը ճառագրելով կը հոչակէ սուրբ Եղիշէ վարդապետ :

Մո՛վսէս, Մո՛վսէս, Բագրեւանդայ վիճակին ծերունի հովիւ, դու զՀայոց աշխարհ և քո ժամանակ սպացիր և ՚ի հող մտար հանգչեցար . այլ եւս չգիտես թէ քո անմժագ անդ առազան սորիացեալ հայրենեացդ ողբեր զաղբեցա՞ն :

Ա՛չ, ո՛չ . տասն գար անցաւ, տակաւին ողբերդ զառնապէս կը նորով ուիխ . դու այժմ զլուխոդ գերեզմանէ ՚ի վե՛ր առ, տե՛ս քո սիրելի հօտին վերահաւ աղէանները . քանասար գայլերուն վոհմակ յարձակեցան, զառներդ կտորեցին, որոց յորդակոս արիւն՝ չիրիմդ կ'ողողեն և կ'իջնան մինչեւ ՚ի խոր տալանիդ հեծող սոկորներդ :

Դու ինչպէս տեսնալով կ'ողբազրէիր, արդ եւս արհաւիրը անհնարինք պատեցին Հայոց աշխարհ . մարտ թէ ՚ի ներքուստ և թէ արտաքուստ զեզ պաշարեց : հայրենիքը թափուրացաւ, մնացորդ որդիկներուդ կէսն թողլով բնականունդ երկիր՝ զաղմական գնաց, կէսն եւս անխնայ կտորուեցան սուրբ կրօնին համար և Հայոց հաւատին համար :

Եփրա՛տ, Եփրա՛տ, մկրտարա՞ն սուրբ Գրիգորի հառ գեծին որդւոց, ափունքներուդ վերայ ինկած դիակները արեան կեղեղներ թաւալդըր բերելով քո ծոց կը թափեն, եւ դու տո՛ւր ալլքներուդ՝ թող զլորէ տանի մինչեւ Ռվիկանու ափունք . Հայոց աշխարհի անմռունչ ըողըքն է այդ : Կը լոէ՞ արդեօք և կը տեսնայ աշխարհ

հի արեան հանդիսատես խաղաղասէր Լոնտոն . թէ այդէ  
է շահ մածին Անգղիոյ , որ քան զինքն յառաջ Աւետա-  
րանին հաւատացող որդիքներ տարասարարա մեռնին :

Բաղրեւանդայ փոքրիկ հօտին վոքրիկ հովիւներ , ո՛վ  
քահանայք , թէ ողջ մնացեր էք առէք ժամհարներ հետ  
ձեզ , գնացէք շրջեցէք քաղաքի փողոցներ , աներ և  
տան մութ խորչեր որոնեցէք . շրջեցէք նաեւ գեղերու  
և դաշտերու մէջ , ժողվեցէք ուր և գտնէք Հայոց ան-  
թաղ մեռեներ . զի մեռեներու տէրեր թողին ու փա-  
խան . ծնողը փախան՝ զաւակներ թողուցին , զաւակներ  
փախան՝ ծնողը թողուցին . նոյնպէս անբաժան սիրելի ա-  
մուսիններ սէրը մոռցան , զիրեար թողուցին ու փախան :

Սի մի կամ ուրոյն ուրոյն գերեզման մի՛ փորէք այդ  
անտէր մեռելներուն , այլ բոլոր միահամուռ խոր վիճե-  
րու մէջ թաղեցէք . միայն խաչքարէ նշան մի կանգնե-  
ցէք հողակարկառին վերայ . ես աստ կ'արձանադրեմ  
նոցա սուրբ և անմահ յիշատակը :

Ա.Օ.Տ ԿՈ.ՏԱՐԵՑԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՈՆ ԵԽ ՀԱՅ  
ԱՆՈՒԾՆ ՀԱՄԱՐ ՔԻՒՔԵՐՈՒ ԱՆՈՂՈՐՄ ՍՐԷՆ , ՕՍ-  
ՄԱՆԵԱՆ ՏՔՐՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՏԱՐՈՒԱՆ ՀԱ-  
ԿԱՏԱՐԻՄ ՀԱՅԵՐ :

Փողոցէն ելէք , քա՛հանայք , մտէք այդ մերձակայ  
տան մի սենեկին մէջ , ուր երկու նոր ամուսնացելոց  
հարսնարան և առաջ աստն է . տեսէք , զ ուցէ կը ճա-  
նաչէք . թերեւս զ'ուք պսակ զրիք ու կապեցիք այդ  
դժբաղդ գլուխները . տեսէք զոյզ համանման նորահաս  
կտրիճ ամուսիններ , երկու լծակից սիրելիները , զորս  
վայրագ քիւրտեր միմեանց վերայ դնելով ընդ զետին  
դամեր են , որ զիտես թէ ուխտեր էին նոյն իսկ մա-  
հուան մէջ իրարմէ չբաժնուիլ :

Հանէ՛ք այդ արիւնոտ ցիցը , հանէ՛ք ու տարէք պա-  
հեցիք . եթէ դաս և դատաստան լինի աշխարհիս մէջ ,  
եթէ Հայուն զրկանքն եւս յիշեն երկրիտ դատաւորներ  
և արդարութեամբ ժոխարէն յատուցանեն , յայնժամ  
գուք զայդ դատական ատենին մէջ բերէք , թող բողոս-  
քէ , վիայ լինի Հայոց անպարտ արեան :

Առէ՛ք նաեւ իջուցէ՛ք 'ի վայր ընդ ձող և ընդ ցից  
հանեալ Հայոց սոսանման երիտասարդներն . արեւ տե-  
սաւ , լուսին տեսաւ , աստղեր տեսան , աշխարհ տե-  
սաւ և Աստուած տեսաւ . այլ վկայ կը խնդրէ՛ք , ո՛վ  
աշխարհի ատենակալ դատաւորներ :

Համառօտեցէք , համառօտեցէ՛ք աշխարհի խաղա-  
ղութեան դաշնադիր . համառօտեցէ՛ք ձեր երկար և  
պատիստատ դատաստանին վճռադիր , տեսցուք թէ Հա-  
յոց այնչափ զրկանցա , այնչափ զոհերուն և թափած-  
արեան զինը դուք ի՞նչ կը վճռէք :

Ժա՛մ՛սր , թո՛ղ այդ ցցահան դիակներ , մտի՛ր  
'ի տանտուն թոնրին սալլառուին 'ի վե՛ր առ . տե՛ս , մա-  
րած մօխրին վերայ խանձողած կոճղ մի կայ , հա՛ն  
'ի դուրս . մի՛ կարծեր թէ այրած հացի կուտ է այդ , այլ  
հացթուխ և հացարար տանտիկինն է , որ մինչ բարկ  
թոնրին չուրջ նստած անօթի քիւրտին համար հաց  
կ'եփէր , ավերատաներ կերան նորա հաց , զարկին ձգե-  
ցին վառած թոնրին մէջ ու գնացին :

Թէ զիր զիտես , ժա՛մ՛սր , համրէ ու զրէ թէ քա-  
նի՞ քանի Հայոց տանտիկներ այդպէս հրայրեաց չա-  
րամահ մեռան : Թոնրներէն ելած բոլոր Հայոց կիներուն  
խանձողուած նշխարները , ժա՛մ՛սր , լի՛ց կողովը . չա-  
լակդ առ , գնա՛ մինչեւ յիշուովալ , չո՛ւրջ ած պալատա-  
կանաց դռները . տեսցուք թէ աշխարհիս այդ ողորմած  
թագուհիներ Հայոց այրած տանտիկներուն համար ի՞նչ  
դատաստան սլիտի տեսնեն :

Ով ժրագօտի ժամհարներ, թողէք այդ թոնիրիք այրածներ, փութացէք կողմվեր առէք ձեր յուս ելէք հնձանի դաշտ, Հայոց այդ եկութն է, ժողովեցէք այդ կոխոտուած մանրիկ ճիռեր, Հայոց մանուկներու նշխարսներ, զորս Անկմիմուրի ժանամծին զաւակը ոմբական կոխ կոտորեց, ու քամեց Հայկայ զաւակներու արիւնը՝ որպէս քամեն խաղողն ՚ի հնձանին, Խնամով ժողովեցէք այդ փոքրիկ մարտիրոսներու ոուրը և ամբիծ նշխարսներ, տարեք թաղեցէք իրենց հարց ու մարց հետ, եթէ անողոք սուր զիրենք ծնողական գրկերէն բաժնեց, թող դերեցմանին մէջ ուկերոտք գրիտխառնին:

Սիթէ սերմանահան մշակ էք դուք, որ զոգ նոցը կապելով այդ մատաղ ու պարարտ սերմեր կը ցանէք Եվրատայ արգաւանդ դաշտերուն մէջ: Խ

Ցանեցէք, ցանեցէք սյժմիկ և յուսով ցանեցէք թող այդ անմահ հատիկներ մեռնին հողին մէջ, կ'անցնի ձմեռն, կ'անցնին խստաշունչ սառնամանիք, կու գար կենդանարար դարուն, գերեզմանի արտերդ, կը կանաչին, և դուք կը հուտատաք յայնեամ Յիսուսի խօսքին, թէ և Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հասն ցորենոց անսկեալ յերկիր մեռանիցի ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ: >

Հնձանի դաշտին մօտ այդ վարած արտերու մէջն դառն մւնչիւնի ձայներ կու գան, կը լսէք, ժամհարսներ, այդ մոնշիւն՝ մորթազերծ անսանոց մոնշիւնն է, որ հերկագ ործ ակօսներու մէջ ինկած կը տանջուին, վերէն արեւ կը կիզահարէ, ներքուստ զիշակեր անդ վեր և ազուաւներ կացահարելով՝ թել թել միսեր ոսկորնեսներէն կը քաշէն: Դանակ մի առէք՝ կտրեցէք նոցա վիշեր, որ երթան հանգչին:

Ով սոսկալի անգթութիւն, անազ որոյն Քրդեք հապճեպով հասան, մաճկալներ, հօտաղներ սրակոտոր

առանին, և թրերով կտրատեցին եզնամալներուն և գոմիչներուն հաստապինդ ջիւրը, ին՛զն անսուռներ տապիտկիցան ակօսներու մէջ, և առաջ պարանոցներ կտրելու՝ սկսան չերտ չերտ քամակներէն կաշիներ հանել, այդ անվարափ միաշապիկ բոկոտն վայրենիք տրեխաներ չինեցին իրենց համար, որ կ'երթային երկաթէ կոշկիներուն հետ կոռուիլ:

Արդար Աստուած, եթէ զու աշխարհիս վերաց յանցապարտներ՝ և մերթ եւս անմեղներ տանջելով կը ընուս ու կը կատարես արդ արութեանդ չափին ու հատուցումն, միթէ անասունքն եւս յանցապարտ են քո սուած, այդ անողորմ ամբարշատ ազիքներ չե՞ս կտրատեր նոցա փորին մէջ, զու որ Կինուէի անասնոց խընայեցիր, այս անխօսուն հեծող անասնոց դատաստանը չե՞ս սենեներ:

Արեւն ՚ի մայր մոտա, ոյլ ձեզ համար հանդիսու ու զաղար չկայ, կորի՛ճ ժամհարներ, Ցովրիթի նման աւարինացէք, զիշերաժամուն ելէք՝ լուսնի լուսով ժողովեցէք Հայ մարտիրոսաց նշխարներ, մայրերու գրկէն ու կուրծքն մի՛ բաժնէք յօշոտուած մանուկներ, մի՛ զ սլք, մի՛ կրկտէք այդ արիւնչազախ դիակներ, պատան պէտք չէ՛, կանաչ խոտերու մէջ փաթթեցէք Հայոց կանչարեւ և ժուռումու մեռելներ, թէ պատառ մի կոտա կը գտնէք, կենդանույն մեռած Հայոց հոլանի կիներուն և կոյսերուն տուէք, որ պատառեն իրենց առականքը, բաւ է՛ թէ այդ անտէր մեռելներ, Փրիսոսուի անուան զոհեր՝ իրենց արիւնոտ չապիկներով և պատառատուն ցնցոտիներով թաղէք, թող նոցա ողիներ երթան երկնից մէջ պայծառազգեստ լինին:

Այլ գիտե՛մ ես, գիտե՛մ, ո՞վ Հայոց անթաղ զիւակներ, ձեզ համար ոչ քահանայ կայ, ոչ ժամահար, ոչ յուղարկաւոր, ոչ սիրելի, ոչ բարեկամ, սարսուռ և

արհաւիրք ամենուրեք տիրեր է , ո՞վ կը համարձակի կատարել ձեր թաղման հանդէսը : Ո՞հ , ո՞հ , Հայոց որդիիներ , հող ու դաշտ չառ ունէիք , գետնի երես դուք անհող , անծածկոյթ մնացիք , երինից թռչուններ և երկրի շուներ ժողովեցան՝ կերան ձեր մարմին , կրծեցին ձեր ոսկորներ . մինչ ողջ էիր՝ բռնութիւն զնեզ կեղեցեց ու քերիեց . և մեռնելին յետոյ՝ թերեւս տառցիք թէ ազատուեցանք տառապանքէն , հանգինք հողին մէջ . ո՞չ , ո՞չ , հանգստեան հող չառուին ձեզ . զի նոյն անողոք բռնութիւն՝ ձեր անշունչ դիակներն եւս հարստահարեց :

Ո՞վ՝ Լուսին Լուսին , Հայոց աշխարհէն կու դառ , Բագրեւանդայ կոտորածի դաշտերէն անցա՞ր . այնպէս կը թուի որ գիշերաժամուն մէջ շառաւիզներդ արիւնոս դիակներու վերայ զարնելով՝ երեսդ շառագուններ է : Մի՛ անցնիր ճեպով . պահ մի կա՛ց ինւզանդինի հօրիզոնին վերայ , պանդուխտ Հայերուն լո՛ւր առուր Հայոց աշխարհէն . լո՛ւր տուր մեր թշուառ ընտանիքներէն , ո՞վ մեռաւ , ո՞վ մնաց , ո՞վ գերեցաւ և ո՞վ թողուց հայրենիք՝ դաղթական գնաց : Թողուց իւր հասած հունձեր , թողուց իւր հօտն ու նախիր , թողուց իւր կեանքն և ամենայն ինչ : Մերի , կողոպուտ գնաց . ասաց թէ՝ անցնիմ այս կարմիր ծովն և միանգամ ազատիմ շարչարանաց աշխարհէն :

Ո՞վ՝ Լուսին Լուսին , Մասիսի գագաթէն անցա՞ր , դաշերդ շուրջ ածի՞ր , Արագածի ոսքը՝ Կըմիածնայ պարսպին տակ թափած Հայոց զաղթական ժողովուրդն տեսա՞ր որպէս յաշնանավերջին ծառերէն թափուած դեղնած տերեւներ . դիտեցի՞ր նոցա ապաժոյթ վիճակ . տեսա՞ր այն գետնի վերայ նուազած ու թալկացած մայրեր , որոց շամբած կուրծքերէն կախուեր էին դիեցիկ մասնուկներ . նոքա կական բառնալով կաթ կը խընդուէին և մայրեր զնաց :

Ո՞վ Հայր ու Հայրապետ Հայոց , Կըմիածնայ վեհատրանի լուսամուտէն կը դիտէ՞ք դէպ ՚ի բագրեւանդայ կոտորածի դաշտ , թէ կ'ասէք հեռու է աշքէս և կարծ է իմ ձեռքս . ուրեմն թողէ՞ք մեռելոց դաշտը՝ դարձուցէ՞ք ձեր աշքը գաղթական ժողովուրդին վերայ , որ կենդանւոյն մեռած ու թաւալած են Կըմիածնայ պարմագներուն տակը : Է՞լ այտի , դու ինքնին հայրական գորովլիվ մատակարար եղիր . դոքա սուրբ Գրիգորի մնացորդ որդիքներն են . տե՛ս , ի՞նչպէս մերկ , կապուտ կողովուուտ , անինչ անստացուած ձեր հայրական գիրկ դիմեր են , հաց կ'ուղեն , հանգերծ կ'ուղեն , հանգըստարան կ'ուղեն . ժողովէ՛ , պատապարէ՛ զիրենք Այրարատայ ծոցին մէջ : Դոքա Եփրատայ ակներէն և Նպատլեռն կու դառ , Երասմին , Արագածէն և Մասիսէն պաշտպանութիւն կը խնդրեն , ո՞հ , զգիտեմ թէ կը գտնե՞ն՝ թէ յուսով կը թափառին :

Ո՞վ իմ լրացեալ Լուսին , Վասպուրական աշխարհի Աղբակու գաւառէն անցա՞ր , և ի՞նչ տեսար . ես քան գքեզ յաւաջ զիտեմ այդ , քու պատմէ՛ մեզ : Պարսկական Քրդաց հրոսակներ յարձակեցան , աւարեցին տարան բոլոր Հայոց գեղեր : Անձարակ ժողովուրդ երբ մերկացաւ իւր կեանքն և գոյքէն , շուարեցաւ մնաց . ասաց թէ ո՞ւր երժամ , ո՞ւր ավաստանիմ , գէթ հոգիս ազատեմ . երկու կրակի մէջ մնացի և կը խորովիմ : Ո՞հ , սկամա ընտրեց նա թողուլ քաղցր հայրենիք՝ գաղթական երթաւլ , կամովին ձգել զինքն Պարսկական կին կրակին մէջ , որ երբեմն մեր աշխարհ և մեր նախնիքներ վառեց ու մոխիր դարձուց :

Բա՛րդուղիմէ , Բա՛րդուղիմէ , Հայոց նախնին լո՛յս ու լուսաւորիչ , ո՞ւր ես . տարա՞ն , տարա՞ն քո փոքրիկ հօտն ու ժողովուրդ , որ քո հովաննեաց տակ և գերեզմանիդ շուրջ կը բնակէր : Կողոպտեցին ու քանդեցին հապարամեայ հնաշէն վանքդ . այդ բաւական չէ՞լ : յանձ

դդնեցան պիղծ ձեռքեր փորել ու կրկտել հազար ուժ՝ հարիւր տարուան կնքուած տասլանդ . այդ յիմար և ասիրատ ազգ կարծեց որ գերեզմանդ գանձերով ի է կամ սուրբ ոսկորներդ ոսկի գարձեր են :

Այլ եւս ինչ որ գիտես ու տեսար , պատմէ՛ մեզ՝ ո՞վ կուսին , Հայոց աշխարհի ցաւեր և ազէտներ մեզմէ մի՛ ծածկեր : Կ'ասեն թէ մեր հաւատոյ ոսկին ու թըշնամին . . . երբ Բաղրեւանդ այ կոտրածէն յետո կը դառնար , զեղեցիկ կիներ ու կոյսեր ընտրելով տուատարաւ իւր բանակին հետ . տարաւ վակեց լիկանուագաւորին մէջ , ուր այդ չարշագ գազանին որջն է . ուր 'ի սկզբանէ անտի սովորած էր միշտ Աւետարանի հօտէն հանել ու խառնել իւր դունդերուն հետ :

Անթիմուրի գերեզմանի որդերէն ծնած ո՞վ չառ րաճճի սովուն , կրծելով կրծեցիք Հայու միսն ու ոսկոր օձանման սովալով մտար Հայոց դրախտը , ամեն ծաղիկներ և կանաչ բոյսերը պղծելով ապականեցիր , չարշարցիք Աստուծոյ խոնարհ ժողովուրդ , և առաջիր դուինքնին թէ՝ ո՞չ կը տեսնայ և ո՞չ 'ի միտ կ'առնու Յակովբայ և Գրիգորի պաշտեալ Աստուած :

Իմացի՛ր , խմացի՛ր , ո՞վ անմիտ և անդուսոմ , թէ արդ դար գատաւորն Աստուած իւր ծառայներուն վրէժ խնդիր է , և նոցա անպարտ արիւն պիտի խնդրէ քու ձեռքէն . կը մեռնիս և 'ի դուստ կ'իջնաս . նոյն գերեզմանի որդունք՝ յորմէ ծնար դու , և զքեզ պիտի ուտեն կը կրծեն . պիտի վշրին սրաժանի ատամունքներդ , զորու կը կրծտէիր հաւատացեալ ծառայներուն վերաց :

Ո՞հ , Հայոց աշխարհ , ո՞հ , ազէտներդ անբաւ անհիու են , զորս կրեցիր դու այս նոր Անթիմուրի ձեռքէն : Ես ուշամուաց եղայ և չգիտեմ թէ զո՞րն ողբամբ քանդուած գեղերդ ողբամ , վարատեալ ժողովուրդդ :

ողբամ , 'ի ոսր և 'ի ձոր թաղիառական ընտանիքնի՞րդ ողբամ , հայրենիքն վարեալ դաղմական որդիքնե՞րդ ողբամ , յափշտակեալ կիներդ և կոյսե՞րդ ողբամ , քանդուած վանքերդ և պղծեալ տաճարնե՞րդ ողբամ , անհաց , անապարուստ , անձարակ ու թշուառ կեա՞նք ողբամ , վաստակաւոր մշակնե՞րդ ողբամ , որ բարդ 'ի բարդ հնձուեցան ու որայի նման փառեցան արտերուդ մէջ , որոց արեան ցնցուղներ ցայտեցին և կարմիր ներակուեցան ցորենի հասկեր և հատկիներ :

Պահ մի կերէ՛ք այդ արիւնոտ հաց ու յազեցէք , ուուք՝ որ երկրաց ործ ժողովուրդը կոտորեցիք , վաստակաւոր եղնամոլներ մորթեցիք , հողադործին խսին ու հարօր և սայլեր ջախչախնեցիք , ոչխարաց հօտերը լեռներէն աւարեցիք , կաթնարար տանտիկները կամ մեռուցիք կամ վախուցիք . ինչ որ արդիւնարեր էր երկրին և տէրութեան շահ , ինչ որ ձեր անշահ և անվաստակ կեանքին առատ հացն ու սեղանն էր , ուուք զայն ամեն ձեր ձեռքով կործանեցիք . կարծեցիք թէ ուրիշներու կեանքը կ'սպաննէք ու կ'սպառէք , բայց ուուք ինքնին անձնասպան եղաք ու չիմացաք :

Տեսցուք այսուհետեւ թէ ուստի պիտի յադենայք , երբ մշակ ժողովուրդին կեանքն և ոյժը ջլատեցիք . Նորա որ մեռան , հողն իրենց հանդիստ դտան ու ազատուեցան տառապանքն . օն և օն արասց Աստուած՝ եթէ ուուք առանց հողի և մշակի՝ ոյջ մեայք երկրիս վերայ :

Ո՞չ միայն կշտաղինդ կերայք , այլ և խեղճ զեղացւոյն կեանքը անխղճապէս կողոպակեցիք , ոչ ինչ չմողիք . թէ շաեսարանին մէջ մի զու ցորեան կար , թէ իւղամանին մէջ մի կը իւղ , թէ մառանին մէջ փոքր ինչ պաշար՝ որ իւր տղոց բաժին ու հոդեպահիկն էր , զայն ամեն հանիք թափեցիք 'ի դուրս , աղբիսաներու մէջ խառնեցիք , որպէս զի գիւղացի ընտանիք սովալիւեկ

մեռնին . բայց միթէ դուք պիտի մնայք ու ապրի՞ք ,  
ժա՛նու խորամանկներ :

Ո՞հ , որչա՞փ իղձ կը լինիմ ես , և ո՞ տայր ինձ , Հա-  
յոց աշխարհ , որ ողբերուս հետ սփոփանք խոռնելով  
զքեզ միսիթարէի և սրբէի լացով ժողովուրդիդ գետա-  
հոս արտասուցը , զոր թափեց նա իւր արեան հետ :  
Բայց ես էլ կը վարանիմ Մարդարէին պէս և կը գոչեմ ,  
« Ո՞վ միսիթարեսցէ զքեզ , զո՞ւսար Սիօնի , զի ծան-  
րացաւ բաժակ բեկման քո » :

Այո՛ , կարի յոյժ դառնացաւ քո բաժակ , Հայո՛ց  
աշխարհ . չգիտեմ թէ ո՞րպէս յուսադիր լինիմ ու միսի-  
թարեմ զքեզ . զի ես էլ քո տարաբաղդ որդիքներէն  
անմիսիթար մի զաւակն եմ , որ բախտն ինձ միշտ լալ վի-  
ճակեց ու երբէք չխնդացի : Եւ ի՞նչպէս խնդայ քո հէք  
ողբերգուն , երբ քո կեանք՝ ողբոց ու ցաւոց աշխա-  
րան է :

Այլ միսիթարեա՛ց , միսիթարեա՛ց , Մա՛յր Հայաստան ,  
զի դու սովորած ես ցաւեր ու վիշտեր կրել . հազար  
անգամ մահարեր երկունքներ զքեզ ըմբռնեցին և դու  
հանդուրժելով անցուցիր երկունքներդ և ողջ մնացիր :  
Հազար րիւր ազտաներ տեսար , միշտ որդիքներդ գըր-  
կէդ վարատեցան , բայց դու երբէք չվհատեցար , զի  
ողիդ աղողպատի նման պինդ և աննկուն է : Հազար  
անգամ գերեզմանին դուռը հասար , թշնամիներդ տե-  
սան՝ ծափ զարկին , թէ վա՛շ , մեռաւ Մայր Հայաստան ,  
և դու անդրէն Ղազարոսի նման վերածնար գերեզ-  
մանէն :

Միթէ մարդոյն կամ օտարին ձեռք կարո՞ղ է զքեզ  
մեռուցանել , երբ դու ինքնասպան ըլլինիս , և երբ  
յոյսդ անմահութեամբ լի է : Թէ խորամանկութիւն կը  
ճգնի որդիքներդ ընկճել , որչափ հնարէ՝ հարստահարել

ու վարատել , որպէս զի դու անբարզաւաճ մնաս , ան-  
ձեռ սպասիս , կամ այդ վերահաս թշուտութեանդ  
մէջ բոլորովին չքաւորիս , նկուն դառնաս , ոգիդ ստըր-  
կանայ և երբէք աղատութիւն չմոտաբերես :

Թէ աշխարհիս խորամանկութիւն քեզ համար այս-  
պիսի դաւ կը նիւթէ , զու եւս փորձուութեամբ ու-  
սի՞ր , խորագէ՛տ եղիր , այնպէ՛ս անցիր զաւերէն՝ որ  
զքեզ չուեսնայ գարանամուտն . յուշի՛կ անցիր գնա՛  
յառաջդիմութեանդ մէջ . մի՛ գոչեր , մի՛ աղաղակեր .  
թէ կը խոսիս , թէ կը գործես , լոին և անձայն եղիր :

Մի՛ վհատիր , ժո՞ղովուրդ , թէ զքեզ չորչարելով  
խոնարհ արարին , ոտքիդ առաջ որոզ այթներ լարեցին .  
զու հաւատ ունիս , Աւետարան ունիս , խաչակրութիւն  
ուխտեր ես , կոխի՞ր , անցի՞ր այդ բարիլոնի կրակը , թող  
տեսնան ու զարմանան աշխարհի որդիքներ :

Այս աշխարհ և աշխատիս գահեր՝ ամեն գայթադ-  
զութիւն և որոզ այթներ ունին . իւեզմ և սորուկ ժողո-  
վուդներ բռնարարուած են և կը գոչեն աղատութիւն  
աղատութիւն : Այլ ոչինչ ճար չունին , զորա միակ ա-  
ղատութեան ճար՝ լցու և կրթութիւնն է . զու զայն  
երբ ՚ի ձեռու բերես , այն օր է միայն քո աղատութեան  
տօնահանդէս :

Ո՞վ բագրեւանդայ դժբաղդ որդիքներ , վայրագ  
խուժն զձեզ կոտորեց , վատ և սովիկար Քիւրդն ժողովեց  
տարաւ զձեզ ՚ի սպանդանոց , դանակը առաւ և միահա-  
մուռ մորթեց զձեզ , կացնով ձեր ոսկորներ ջարդեց ,  
դուք անխօս՝ անմուռնչ անշարժ մնացիք , որպէս ոչ-  
խար՝ իւր կտրչին առաջ :

Անխնայ մորթուեցայք , այլ եւս պիտի մորթուիք .  
այս աշխարհիս օրէնք , կարգ ու խղճմտանք այսպէս է .

մարդիկ՝ որ տէր են և կիշխնեն անասնոց, ոչսարի նման՝ մարդիկներէն պիտի մորթուին, երբ չունին խեթիկիշ եղիւր, որ ցուլի նման ոգ որին իրենց կտրիչներուն դէմ:

Յո՞ւշ, յո՞ւշ, ո՞վ կոտորուած գառներ, ո՞վ Հայոց ողջ ու մնացորդ որդիքներ, դեռ պիտի կոտորուիք, դեռ պիտի մորթուիք այդ չքոտի փիւրդերէն, քանի որ անզէն, անեղիւր, անասպար կ'ապրիք. դուք մարդ էք, ձեռք և բազուկ ունիք, միթէ անզգ ացած մեռե՞ր է ձեր սրտմտոթեան ոգին. միթէ կը հաւատայք որ իշխանութեան աշքը հասնի մինչեւ Հայոց ամայի լեռներ ու դաշտեր և ձեզ պահապան լինի:

Ես գիտեմ ու կը տեսնամ գքեզ, որ իրբեւ մի անյարիր անդ ամալոյծ՝ Պրովատիկէ աւազանին շուրջն ինկած, անոք, անօդնական մնացեր ես. ո՞հ, հիւանդութեանդ շրջանը չէ թէ երեսուն և ութ ամէն, այլ չորեքհարիւր ամ, անդ ամեներդ ամեն բեկրեկուած, ուստքէ մինչեւ ՚ի դլուխոդ վերերով լցուած, մարդ չի՛ հաւատար թէ դու այլ եւս կ'ողջանաս ու կը շրջիս աշխարհիս վերայ. ոգին կենդանի է ու կը տրոփայ, չունչ մի ունիս, որ շարունակ կ'աղաղակես ու կը պաղատիս, Տէ՛ր, ես անոք եմ և չունիմ ինձ օգնական, որ վիս աղատութեան աւազանին մէջ ձգէ և ես բժշկուիմ այս շարախտ և շարաշուք սարկութենէն:

Գոչէ՛, գոչէ՛, ո՞վ անձարակ հիւանդ, քո օգնական՝ Ցէրն է. աշխարհիս վերաց քեզ ոչ ոք օգնական չկայ: Դու Պուլկար չես, որ Օրթոտօք եկեղեցւոյ Զարը քեզ զօրավիգ հասնի. Կաթոլիկ չես, որ Հոռվիր կամ Ֆռանսան գքեզ պաշտպանէ. Բողոքական չես, որ սուրբերուբարեխօսութիւն թողուս և Ավիանու թագուհին քեզ բարեխօս բանես, որ թերեւս գթայ և դարման տանի. զի դու Հայաստանեայց Եկեղեցւոյ աղատ զաւակն ես, իրեւ անձանօթ՝ մտացեալ երկրի մէջ կը բնակիս:

սորած համար արդեօք մարդոց սրտէն ու մարդ ասիրութենէն մոռցուած ես դու:

Մատի՛ր, ո՞վ Ցիսուս, մատի՛ր, հիւանդ և անկեալ Հայուն օգնական չկայ աշխարհիս վերայ, մատի՛ր, ձե՛ռն տուր այդ հինօրեայ անդ ամալուծին, որոյ բազմաստիկ ցաւոց ու վիրաց վերայ այլ եւս անհնարին ցաւս ու վէրս յաւերին այժմիկ: Ասա՛, ո՞վ աղատարար բժիշկ և փրկիչ, թէ արի՛, ա՛ռ զմահիճս քո և ե՛րթ յազատութիւն:

Ո՞վ դու մաշտծ և հիւժած հիւանդ, թէ յիրաւի՛ րժշկութիւն կը ժանես, թէ սուոց աղատութեան կը ցանկա, օ՛ն ուրեմն, փոքր ինչ խլրտի՛ր մահճիդ մէջն, ինքնաշա՛րժ եղիր. ահաւատիկ Աստուծոյ մատն ու հրեշտակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրերը կը յուզեն. ով որ զինքն վազ ձգէ նորա մէջ, նա միայն իւր ցաւերէն աղատ կը լինի:

Թէ ցիստես, ես՝ իրբեւ դաս՝ խօսիմ քեզ, որ դու խելամոխ թէ քանի՞ թանդէ պատութեան գին. աշխարհիս Փրկիչ զայն իւր խաչով և արիւնով գնեց. նոյնդ ունակ մեր նախնի քաշեր Եկեղեցւոյ և Հոյրենեաց աղատութիւն մահով և արիւնով գնեցին: Միթէ դու ցանկամի աղատութիւն առանց զոհի և արեան ձրի՞ ստանալ կ'ուզես:

Թո՞վ, թո՞վ որ դարձեալ ողբամ զքեզ, Հայոց աշխարհ և ժողովուրդ. մինչ աշխարհիս շրայուղման և առեան ալիքներուն մէջ այլ և այլ ազգեր կը լողան աղատութեան նաւահանգիստ գտնել, զու ալեաց ելեւէ ջներու մէջ կը տատանիս. զիերալոյս փարոսներ շունիս, նաւահանգիստ, նաւահանգիստ, կ'որոնես և չես գտներ: Այդ յայանի է, թէ դեռ անարուեստ ես, լողալ չգիտես:

Թո՞վ ուրեմն այժմիկ աղատութիւն, միայն խաղաղութիւն խնդրէ. դեռ քեզ համար ուսումն և կրթութիւն պիտք են, և դու այդ քո տատանման մէջ Պետ-

բոսի նման ձեռներդ Յիսուսին կարկառէ և ասա . Տէ՛ր ,  
քո ձեռն տուր՝ զիս փրկէ . Եթէ թողուս ու չփրկես , Տէ՛ր ,  
ես կը կորնչիմ աւասիկ :

Յուշ կ'առնեմք քեզ , Տէ՛ր , մինչ մի նուագ Տիրերական  
ծով կ'ալեկոծէր , գու ՚ի ինելս նաւուն անխոռվ կը նըն-  
ջէիր , ձայն տուին քեզ աշակերտներդ , զարթի՛ր ասա-  
ցին , Տէ՛ր , զարթի՛ր , զի կորնչիմք աւասիկ :

Ո՛վ դու անքուն պահապան աշխարհի , որպէս թէ  
չէիր զիտեր և չէիր լսեր ծովալիքներուն ձայն , ելար  
յանդիմանեցիր նոցա թերահաւատութիւն , մռնչող ծով  
լսեց քո ձայն ու հանդարտեցաւ և դարձաւ ՚ի խոր խա-  
ղաղութիւն :

Միթէ և այժմ կը ննջե՞ս դու երկնից գահուդք վե-  
րայ , և երկիր՝ որ ոտքիդ պատուանդան է , կը սասանի  
ու կ'երերայ . պատերազմի դաշտերէն կրուրի ահեղ  
թնդանօթներ կ'որոտան , հրալից գնտակներ կը թա-  
փեն , մի խուն վայրկենի մէջ ժողովուրդի կայտառ զաւակ-  
ներ բարդ ՚ի բարդ որայի նման մահուան ագարակներու  
մէջ կը թօթափիւն , և դու չե՞ս տեսնար և չե՞ս իմանար :

Հայեա՛ց և տես , ո՛վ Տէ՛ր , թէ ի՞նչպէս Սովիտակ և  
Սեւ ծովերու կատաղի կոհակներ զիրեար կը բազիսին ,  
հիւսիս և հարաւ հակառակ հողմերով փոթորիկներ կը  
հանեն , երկուստեք սեւ սեւ ամպեր կ'որոտան , բար-  
կաճայթ կարկուաներ կը թափին , աշխարհիս մարդկու-  
թեան ծառերն ու ծառաստաններն չարդուելով լեհուե-  
լով տապալեցան ՚ի գետին :

Երբ այս ծովեր կը խոռովին ու ցամաքն եւս արեան  
ալիքներով կը ծփայ , ի՞նչ կը խորհի և կը զործէ խա-  
ղաղական Ավիանոս . աներքուստ միայն կը մռնչէ նա և  
ուրիշ ոչինչ : իւր խուլ և անորոշ ձայնէն միայն այս կը  
լսեմք , որ կ'ասէ . զնացէ՛ք կռուեցէք . ինձ ոչինչ է  
փոյթ . միայն թէ հեռո՛ւ հեռո՛ւ , իմ շահուամ մի՛ դպիք ,  
ապա թէ ոչ և ես կը յուզուիմ :

Ո՛վիիանէ , Ո՛վիիանէ , որ կը պարծիս թէ ամեն ծովե-  
րէն մեծ և հարուստ եմ , որ կը քարոզես թէ մարդասէր  
եմ , խաղաղութիւն կը սիրեմ , Աւետարան կը սիրեմ , և  
յաճախ կը կարդաս Յիսուսի այս բան « Երանի՛ խաղա-  
ղարարաց , զի նոքա որդի լք Աստուծոյ կոչեցին . » :

Երկնից աչք կը տեսնայ , զիտէ և կը քննէ քո խոր  
երիկամունք . խսկ աշխարհի առաջ չքմեզս լինելով ստէպ  
ստէպ յայտարարեցիր , թէ տքնեցայ ու ջանացի որ խա-  
ղաղութիւն հաստատեմ , բայց ընդունայն համարեցաւ  
իմ ջանք . ձեռքս լուացի և ասացի թէ քաւեալ եմ ես  
այդ պատերազմի արենէն . և դու սառն աչքով կը զիտես  
այտի այժմ արեան դաշտին վերայ :

Ո՛վ գահերու դատաւոր Աստուած , կը տեսնաս դու ,  
Արեւելեան խնդիր մի կայ աշխարհիս վերայ , որ Գորա-  
գեան հանգուրց դարձեր է . այս քանի՞ ամ է , որ այդ  
խնդիրը աշխարհները կը խռովէ , ժողովրդոց խաղաղու-  
թիւնը կը բաւանայ . Եւրոպիոց գահերն ու զիւանագէտք  
չկամեցան կամ չկարացին լուծել զայն , զոր հիւ-  
ցազն Աղէքսանդր մի հարուածով ընդ մէջ կարելով լու-  
ծեց այդ հանգուրցը :

Խսկ նորն ասաց , ՚ի բա՛ց կացէք , ձեռնամուխ մի՛  
լինիք , այդ խնդիրն իմ բաժին և իրաւունքն է , թողէք  
ես միայնակ կը լուծեմ զայն : Զարնելով զարնելով բա-  
զուկներ պարտասեցան . կ'ասեն թէ սուրն եւս բթա-  
ցաւ , և հանգուրցը գեռ անլուծանելի մնաց :

Ո՛վ դժոխային կնճիռ , որ մարդկանց արիւնով կը  
մածանիս և քանի երթաս՝ կը կնճոիս , թշուառ ժողո-  
վուրդներ որչա՛փ զոհեր տուին և որչա՛փ արիւն թափե-  
ցին քեզ համար : Թէ լուծուիս՝ Պուլկարիոյ արեան զին  
աղատութիւն կը խոստանաս . այլ կը մոռնաս ու բնաւ չես  
յիշեր չայց անպարտ արիւն և իւր տուած անհուն զոհեր :

Ո՛վ Երկնից արդարութիւն , մարդկանց փրկութիւն  
ընդունայն է . սուրդ երկայնմտութեան պատենէն հա՛ն ,

ու ու միանդ ամ՝ հա՛ր և լուծէ՛ այս յաւիտենական հանա  
դուրցը, որ աշխարհիս վերայ գայթագութիւն մի դար-  
ձեր է: վա՛յ նոցա՝ որոց ձեռքով այս աշխարհաքանդ  
գայթագութիւն կու գայ:

Դու կը տեսնաս, երբ գահեր կոիւ ուղեն՝ Արեւե-  
լեան խնդիր կը յուղեն՝ և երբ աշխարհակալել կամին՝  
դարձեալ Արեւելեան խնդիր կը հանեն: Մինչեւ յե՞րբ  
գահեր թողուն մարդ կութեան վայելուչ խօսք, խորհուրդ  
և ուխտ, սրով և արիւնով խօսին: մինչեւ յե՞րբ զօրա-  
ւորներ կուուին՝ տկար և անզօր ազդեր ոտքի տակ ճըմ-  
լուին, պատերազմի արշաւանքներու առաջ խեղճ ժողո-  
վուրդ աշխարհաքանդ ու տնաքանդ լինի:

Նեղեալ, տառապեալ, զրկեալ, հարստակարեալ, կո-  
տորեալ, վարատեալ, չքաւորեալ և յուստակատեալ ժո-  
ղովուրդ՝ ճնշող երկաթին տակ կը հեծէ, կ'աղաղակէ և  
կ'օրհնէ քո անուն, ո՛վ Տէր, տո՛ւր մեղ քո մշտնչենա-  
ւոր խաղաղութիւն:

Յսա՛ թող հանդ արտին խոռովեալ ծովեր՝ ասա՛ թող  
կարին Կրուրի թեղանօթի ձայներ: ասա՛ գահերուն  
թող սուրերն ՚ի պատեան զնեն: Ես զիտեմ, նոքա մէ  
կը կարդան և ո՛չ քո բան ՚ի միտ կ'առնուն, թէ «Որ  
սուր առնու, սրով անկանիցի»:

Տէ՛ր, գու զիտէիր կանխաւ, որ աշխարհ և գահերն  
զմեզ կը չարչարեն: սորա համար ասացիր որ աղօթենք  
և միայն քո արքայութիւն խնդրենք: Մարդիկ անդի-  
տանալով՝ Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ կը խնդրեն:

Այլ քո ճշմարիտ հաւատացեալներ պէտք է յամենայն  
ժամ այս խնդրեն: Եկեսցէ արքայութիւն քո, որ է  
ճշմարիտ խաղաղութիւն, սէր և հաւասար եղբայրսի-  
շութիւն, և քո բարի կամքն այն է որ մարգիկ այս  
պայմանով ապրին աշխարհիս վերայ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0249552

ՀՀ Ազգային գրադարան



NL0249551

